ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

7 մայիսի 2010 թ. N------Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային և քաղաքաշինական գոտիները սահմանելու մասին» N 13-Ա որոշմամբ սահմանված Երևան քաղաքի քաղաքային նշանակության քաղաքաշինական գոտում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան՝ քաղաքաշինական գործունեության ոլորտում Երևանի քաղաքապետի լիազորությունը (բացառությամբ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով սահմանված ավարտված շինարարության շահագործման փաստագրման լիազորության) պատվիրակել Երևանի վարչական շրջանների ղեկավարներին՝ հետևյալ քաղաքաշինական օբյեկտների մասով.

1) բազմաբնակարան շենքերում բնակելի և ընդհանուր օգտագործման տարածքների (բացառությամբ դրանց գործառական նշանակության փոփոխության դեպքերի) շինարարության թույլտվություն պահանջող ներքին հատակագծային փոփոխությունների իրականացում.

2) բազմաբնակարան շենքերում առաջին հարկի լուսային բացվածքները մուտքերի վերակառուցման շինարարության թույլտվության տրամադրում՝ Երևանի քաղաքապետի կողմից համաձայնեցված նախագծի հիման վրա.

3) մետաղական ավտոտնակը նույն չափերով մետաղական նոր ավտոտնակով փոխարինման համար թույլտվության տրամադրում:

2. Սահմանել, որ քաղաքային նշանակության քաղաքաշինական գոտուց դուրս պետական կամ համայնքային սեփականություն չհամարվող հողամասում անհատական բնակելի տան կառուցումից և վերակառուցումից (եթե վերակառուցման արդյունքում այն չի գերազանցում երեք հարկն ու ձեղնահարկը) և դրա օժանդակ շինությունների կառուցումից բացի այլ քաղաքաշինական գործունեության իրականացումն ունի քաղաքային նշանակություն և այդ մասով լիազորությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը, այդ թվում՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ավարտված շինարարության շահագործման փաստագրման լիազորության:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տեղեկանք հիմնավորում

Սույն որոշման անհրաժեշտությունը պայմանավորված է Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքի 12-րդ հոդվածի 32-րդ կետի և 52-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով:

Ըստ այդմ էլ Երևանի ավագանին 2009թ.հուլիսի 6-ի որոշմամբ սահմանել է քաղաքային նշանակության քաղաքաշինական գոտին (քարտեզի տեսքով):

Նույն օրենքի պահանջով պետք է սահմանվեն նաև այն պայմանները, որոնց պարագայում քաղաքաշինական գործունեությունը թեև իրականացվում է քաղաքային նշանակության քաղաքաշինական գոտուց դուրս, սակայն ունի քաղաքային նշանակություն:

1.Հիմք ընդունելով Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը և դրա հիման վրա մշակված վարչական շրջանների և առանձին հատվածների համար գոտիավորման նախագծերը և կառուցապատման էսքիզները, ինչպես նաև քաղաք մտնող և քաղաքից դուրս եկող մայրուղային ճանապարհների, համաքաղաքային նշանակության փողոցների շուրջ կառուցապատման կանոնակարգման անհրաժեշտությունը, որպես պայման առաջարկվում է , որ վարչական շրջանի ղեկավարը քաղաքային նշանակության քաղաքաշինական գոտուց դուրս գտնվող տարածքներում բացառապես սեփականության իրավունքով պատկանող հողամասերում անհատական բնակելի տան կառուցման և վերակառուցման (եթե վերակառուցման արդյունքում այն չի գերազանցում երեք հարկն ու ձեղնահարկը) և օժանդակ շինության կառուցման համար.

- տալիս է ճարտարապետական առաջադրանք
- համաձայնեցնում է աշխատանքային նախագիծ
- տրամադրում է շինարարության և քանդման թույլտվություն:

2.Անկախ քաղաքաշինական գոտու նշանակությունից վարչական շրջանի ղեկավարներին պատվիրակվում է բազմաբնակարան շենքերում բնակելի և ընդհանուր օգտագործման տարածքների շինարարության թույլտվություն պահանջող քաղաքաշինական փաստաթղթերի (ճարտարապետահատակագծային առաջադրանքի, աշխատանքային նախագիծ, շինարարության թույլտվություն) տրամադրում:

3.Վարչական շրջանի ղեկավարին պատվիրակվում է անկախ քաղաքաշինական գոտու նշանակությունից առաջին հարկի լուսային բացվածքները մուտքերի վերակառուցման համար քաղաքապետի կողմից համաձայնեցված նախագծերի հիման վրա շինարարության թույլտվություն, ինչպես նաև մետաղական ավտոտնակը նույն չափերով մետաղական ավտոտնակով փոխարինման համար թույլտվության տրամադրում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ